8347

17.09.2013

24 SEP 2009

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

Հ-22
09 DEC 2009
277

# ՀԱՄ. Կ.(Բ)Կ. ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. Գործնական միջոցներ «բանվորներին ներգրավելու և կուսակցության անումը կարգավորելու» Համ. Կ. (բ)Կ. Կենտկոմի նոյեմբերյան պլենումի բանաձևը կիրառելու և դրա հետ կապված կուս աշխատանքն արդյունաբերական ձեռնարկներում ավելի լավացնելու մասին:
2. Կոմունիստների և կուսակցության մեջ ընդունվողների սոցիալական դրության բնորոշման մասին:

Հ. Կ. (Բ) Կ. ԿԵՆՏԿՈՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1929

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Անվան
Публичная Библ
1506-50

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 2888
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 2031 բ.
ՏԻՐԱԺ 300

## ՀԿ(Բ)Կ ԳԱՎԿՈՄՆԵՐԻՆ, ՇՐՋԿՈՄՆԵՐԻՆ ՅԵՎ ԲՈԼՈՐ ԿՈՒՍԲՋԻՋՆԵՐԻՆ

*ՀԿ(բ)Կ կենտրոնական կոմիտեն ուղարկելով ձեզ Համկոմկուսի կենտկոմի վերջին վորոշումները կուսակցության աճման և կուսակցության մեջ ընդունվողների սոցիալական դրության բնորոշման մասին՝ առաջարկում է՝ կուսբջիջների հերթական ժողովներում և բյուրոյի նիստերում հատուկ քննության առարկա դարձնել այս նյութերը և կոնկրետ միջոցներ մշակել կենտկոմի դիրեկտիվներն իրագործելու համար։*

ՀԿԿ(Բ)Կ ԿՈՄԻՏԵ

# ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

## «ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ» ՀԱՄ.ԿԿ (Բ) ԿԿ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԸ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՅԵՎ ԴՐԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿՈՒՍ. ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԱՎԵԼԻ ԼԱՎԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Համ. ԿԿ (բ)ԿԿ 1929 թ. հունվ. 7-ի վորոշումը).

ԿԿ նոյեմբերյան պլենումը նշեց, վոր «բանվորներին կուսակցության մեջ ներգրավելու աշխատանքներն ուժեղացնելու և, հետևաբար, սոցիալիստական վերակազմության շրջանի հիմնական նպատակները կիրառելու համար, անհրաժեշտ է կուսակցության մեջ ներգրավել բանվոր դասակարգի խոշոր առաջավոր տարրերը, վորոնք ընդունակ են բանվոր մասսայի ավանգարդը լինելու»։ Ելնելով այս հիմնական դիրեկտիվից, Կենտկոմը բանվորների ներգրավման և կուսակցության աճման կարգավորման մասին յեղած նոյեմբերյան պլենումի վորոշումները զարգացնելու համար՝ վորոշում է.—

### 1. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ ԿԱՆՈՆԱՎՈՐԵԼՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Առաջարկել կուսակցության յերկրային (մարզային) կոմիտեներին և ազգային կոմկուսակցություն–



ների ԿԿ-ներին կուսակցության մեջ ընդունվողների կազմն ապահովել արտադրական բանվորներով ու բատրակներով՝ արդյունաբերական շրջանների կուսկազմակերպություններում 90 տոկոսից վոչ պակաս, յերկրագործական շրջաններում մոտ 70 տոկոս և ազգային հանրապետությունների կազմակերպություններում մոտ 60 տոկոս։

Սրա հետ միասին առաջարկել կուսկոմիտեներին անհապաղ վերացնել մի շարք տեղերում գոյություն ունեցող առանձին կազմակերպությունների համար աճման, այսպես կոչված, ստուգիչ թվերի, մոտավոր թվական ծրագրերի և այլնի գործադրումը, և փոխարինել այդ մեխանիքական կարգավորումն ամեն մի առանձին կազմակերպության կոնկրետ դիրեկտիվներ տալով։ Այդ նպատակով նահանգային և մարզային կոմիտեներում դնել կուս. առանձին մարմինների հաշվետվությունները ներգրավման ընթացքի ու կազմակերպության աճման մասին, տեղերում հետազոտելու միջոցով ստուգել այդ աշխատանքը և այլն։

2. Առանձին դեպքերում, յերբ կազմակերպությունն ուռճացել է ի հաշիվ վոչ պրոլետարական տարրերի՝ ժամանակավորապես, անորոշ ժամանակով, թույլ տալ դադարեցնելու վոչ արտադրական բանվորների ընդունելությունը, նահանգական, մարզային, գավառային և շրջանային կազմակերպություններում Համ. ԿԿ(բ)ԿԿ թույլտվությամբ, իսկ առանձին բջիջներում յերկրային (մարզային) կամ նահանգական կոմիտեների թույլտվությամբ՝ նախապես հայտնելով Կենտկոմին։

3. Կարգ սահմանել, վոր ծառայողները (և այլք),

ինչպես կուսակցության թեկնածու ընդունվելիս, այնպես էլ թեկնածությունից կուսանդամ փոխադրվելիս պարտավոր են ունենալ հինգ տարվա ստաժ ունեցող հինգ երաշխավորող կոմունիստների թվում երեքից ոչ պակաս արտադրական բանվորներ (գյուղում երկուսից ոչ պակաս բատրակ կամ գյուղատնտեսական բանվոր):

4. Կուսակցության աճումը կարգավորելու տեղական կազմակերպությունների աշխատանքը սիստեմատիկ ստուգման ենթարկելու և անհրաժեշտ ուղղումներ նրանց գործնականի մեջ մտցնելու նպատակով առաջարկել ԿԿ Կազմբաժնի· բաժնին կանոնավոր կերպով (3 ամիսը մեկ անգամ) տեղեկացնել ԿԿ—ին կուսակցության աճման և նրա կազմի փոփոխման մասին, ինչպես ըստ շրջանների, այնպես էլ առանձին դեպքերում ըստ արդյունաբերական ճյուղերի: Բացի այդ, մոտակա 3 ամսվա ընթացքում լսել ԿԿ—ում կուսակցության մեջ բանվորներ ներգրավելու ընթացքի մասին՝ Ուրալի մարզկոմի, Վլադիմիրի և Ռյազանի նահկոմների, Թաթարստանի կոմիտեյի և Օմսկի մարզկոմի հաշվետու զեկուցումները:

## 2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՈՒԺԵՂԱՑՆԵԼՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Առաջարկել կուսմարմիններին—ներառյալ մարզային և երկրային կոմիտեները—սիստեմատիկ կերպով ստուգել մասսայական աշխատանքի դրույթը ձեռնարկություններում՝ աշխատելով ամեն կերպ ամրապնդել բջիջների ու բանվորական մասսաների միջև եղած անմիջական կապը: Այս նպատակով հատկապես անհրաժեշտ է վճռականորեն վերացնել բջիջներում դրո—



ներքաց ժողովների հազվադեպ լինելու փաստը. ավելի հաճախակի բջիջները պետք է զրույցներ կազմակերպեն անկուսակցական ակտիվիստների խմբակների հետ արտադրության աշխատանքի առանձին խնդիրների շուրջը (կուլտուրական աշխատանք, արտադրական խորհրդակցությունների աշխատանք և այլն) և ժամանակ առ ժամանակ բանվորական ժողովներում դնեն կոմբջիջների զեկուցումները՝ բջիջի կողմից ձեռնարկություններում տարած աշխատանքի հիմնական խնդիրների մասին:

2. Բանվորներին կուսակցության մեջ ներգրավելու և կուսակցության շարքերը լրացնելու համար պահեստի նոր ուժեր պատրաստելու նպատակով՝ հատուկ ուշադրություն դարձնել խոշոր ձեռնարկությունների վրա: Պարտադրել կուսկոմիտեներին, որ ներգրավման աշխատանքների ծավալման գործում ամեն տեսակ օգնություն ցույց տան խոշոր ձեռնարկությունների կուսբջիջներին (հրահանգման, ժամանակավոր աշխատանքի համար ղեկավարող աշխատողներ ձեռնարկություն ուղարկելու միջոցով և այլն) ու սիստեմատիկ հսկողություն կազմակերպել խոշոր ձեռնարկություններում ներգրավման աշխատանքի ընթացքի նկատմամբ՝ կուսկոմիտեներում լսելով, թե ամբողջ ձեռնարկության և թե նրա առանձին բաժինների կոմբջիջների զեկուցումները:

3. Ներգրավման սիստեմատիկ աշխատանքի ընթացքում պետք է հաշվի առնել այն, որ կուսակցության մեջ պետք է ներգրավել բանվոր դասակարգի առաջավոր տարրերին, մանավանդ խոշոր ձեռնարկություններում աշխատող բանվորական երկարատև ստաժ ունեցող բանվորներին ու բանվորուհիներին: Առաջա—

վոր բանվորներին կուսակցության մեջ ներգրավելն անհրաժեշտ է ապահովել անկուսակցական բանվորական ակտիվի անձնական կազմի մանրամասն ուսումնասիրությամբ, կուսակցության ամենահարազատ բանվոր ակտիվիստների կազմակերպված ներգրավումով (նախ և առաջ կուսխմբերի միջոցով) և կուսակցության մեջ նոր ընդունվողների ընտրման խնդրում անկուսակցական բանվորներին մասնակից դարձնելով (բջիջների դռնբաց ժողովների միջոցով, կուսակցության մեջ մտնելու դիմում տվողների ցուցակները հայտարարելով, առանձին դեպքերում բանվորական հատուկ ժողովներ գումարելով, կուսակցության մեջ մտնողների թեկնածությունը քննադատելու նպատակով):

Կուսակցության կոմիտեները պարտավոր են սիստեմատիկ կերպով հետևել կուսակցության մեջ ընդունվողների վորակական կազմին՝ ստուգելով այդ ուղղությամբ բջիջների աշխատանքը. մանավանդ՝ հատկապես ուսումնասիրել (ընտրական կամ այլ ճանապարհով) բանվորական զանազան շերտերի ու խմբերի ձգտումը կուսակցության մեջ ընդունվելու ինչպես և նոր ընդունվածների կազմը:

4. Նադեժդինսկի զավոդի և Մոտովիլիխայի (Ուրալ), «Կրասնի Պուտիլովեցի» (Լենինգրադ), Դնեպրոստրոյի, Ռիկովի անվան մետաղի գործարանի, Ստալինսկի զավոդի և «Սոֆիա» շախտայի (Ուկրաինա), Արտյոմի անվան շախտայի (Հյուսիսային Կովկաս), հանրապետական 1-ին գործարանի (Կոստրոմա), Ռոդնիկովսկի գործարանի (Իվ. Վոզնեսենսկ), «Պրոլետարկայի» (Տվեր) և «Կրասնի Բոգատիրի» (Մոսկվա) բջիջների մասսայական աշխատանքների մասին ԿԿ-ում լսել հաշվետու զեկուցումներ:



5. ԿԿ ինֆորմացիոն բաժնին և «Պրավդա», «Ռաբոչայա գազետա» ու «Բեդնոտա» թերթերի խմբագրություններին հանձնարարել կազմակերպելու սիստեմատիկ լուսաբանում բանվորներին (ու բատրակներին) կուսակցության մեջ ներգրավելու ընթացքի մասին ամենից առաջ խոշորագույն ձեռնարկություններում, ընդվորում աշխատել լուսաբանել այդ ասպարեզում առանձին բջիջների աշխատանքների թերությունների հետ նաև դրական փորձերը:

6. Համ. ԼԿՅԵՄ-ի ԿԿ-ին պարտավորեցնել կազմակերպել մեծահասակ կոմյերիտականների ու բատրակների պատրաստման ու վերապատրաստման գործը՝ նրանց լավագույն մասին կուսակցության մեջ ներգրավելու համար:

Առաջարկել կուսկազմակերպություններին այդ գործում ամեն տեսակի օգնություն ցույց տալ Համ. ԼԿՅԵՄ-ին, մանավորապես սիստեմատիկ կերպով ստուգել կոմյերիտական կազմակերպությունների համապատասխան աշխատանքները: Հանձնարարել ԿԿ Կազմբաժնին և Համ. ԼԿՅԵՄ-ին՝ վորոշել այդ աշխատանքների կարգն այնպես, վորպեսզի հիմնականում այդ աշխատանքը վերջանա մոտակա կիսամյակում: Վեց ամսից հետո ԿԿ-ում լսել Համ. ԼԿՅԵՄ ԿԿ-ի զեկուցումը կատարված աշխատանքի նախնական ամփոփումների մասին:

7. Բանվորուհիներին կուսակցության մեջ ներգրավելու գործի առաջխաղացումն ապահովելու համար, մեծ մասամբ կանացի աշխատանքներ ունեցող ձեռնարկությունների բջիջների մասսայական և կուլտուր-կրթական աշխատանքները դասավորել այնպես, վոր

տվելի շատ համապատասխանի բանվորուհիների մասսայական մակարդակին, պահանջներին ու կենցաղային պայմաններին: Հատկապես տեքստիլ ձեռնարկություններում վճռական գիծ վերցնել առաջ քաշելու բանվորուհիներին իբրև բջիջների քարտուղարներ, գործարանային կոմիտեների նախագահներ և այլն: Հանձնարարել Բանգեղջ-բաժնին հսկողություն սահմանել, թե տեղական կազմակերպություններն ինչպես են կատարում այս դիրեկտիվը, և 6 ամսից հետո զեկուցել ԿԿ-ին: Սրա հետ միասին Բանգեղջ-բաժնին առաջարկել մոտակա կիսամյակի ընթացքում կազմակերպել 1927–28 թվի պատգամավորուհիների կազմի, նմանապես և բանվորուհիների անկուսակցական ակտիվի (խորհուրդների, Ֆաբգործկոմների անդամների) վերանայման գործը, նրանցից լավագույն մասն ընտրելու և վերապատրաստելու՝ կուսակցության մեջ ներգրավելու համար:

8. Բատրակներին և գյուղատնտեսական բանվորներին կուսակցության մեջ ներգրավելու աշխատանքն ուժեղացնելու համար անհրաժեշտ է՝ ա) մոտակա 2 տարում գյուղական բջիջների ընդունելության ընդհանուր կազմն ապահովել առնվազն 40% բատրակներով ու գյուղատնտեսական բանվորներով: բ) Տեղական կոմիտեներին պարտավորեցնել ընթացիկ տարվա ընթացքում կուսբջիջներ (կամ թեկնածուական խմբակներ) կազմակերպել բոլոր այն խորհրդային տնտեսություններում, ուր առնվազն մշտական 20 գյուղատնտեսական բանվոր կա: գ) Գյուղանտառ միության մարմինների ֆրակցիաներին պարտավորեցնել տեղական կուսկոմների ղեկավարությամբ վերապատրաստել և ակտիվ աջակցություն ցույց տալ բատրակներին կուսակցության մեջ



ներգրավելու գործին՝ այդ աշխատանքը ծավալելով մասնավորապես բատրակական մամուլի, հովվական, տրակտորիստական պրոֆտեխնիկի կուրսերի և այլ ճանապարհներով: դ) Օրենք ընդունել, վոր կուս. լուսավորության գյուղական ցանցի մեջ պետք է առնվազն 30% անկուսակցական բատրակներ ու գյուղատնտեսական բանվորներ ներգրավել, իսկ այն շրջանում, ուր մեծ քանակությամբ բատրակություն կա, անկուսակցական բատրակության ակտիվի քաղաքական մակարդակը բարձրացնելու համար՝ կազմակերպել հատուկ կուրսեր: ե) Բջիջներին ու շրջկոմներին պարտավորեցնել կուսակցության մեջ մտնել ցանկացողների դիմումներն ընդունել և այն բատրակներից ու գյուղատնտեսական բանվորներից՝ վորոնք չեն կարող յերաշխավորություններ ներկայացնել. նմանների նկատմամբ կուսակցության առանձին անդամներին հանձնարարել ծանոթանալ նրանց հետ և յերաշխավորություն տալ:

ԿԿ-ում լսել յերկու խորհրդային տնտեսությունների՝ «Խուտորոկ» (Կուբանի շրջան) և «Լոտոշինո» (Մոսկվայի նահանգ) բջիջների աշխատանքների մասին զեկուցումներ:

9. Խոշոր ձեռնարկություններում բանվորներին կուսակցության մեջ ընդունելու համար սահմանափակել ինստանցիաների քանակը հետևյալով՝ ցեխբջիջի բյուրո, ցեխբջիջի ընդհանուր ժողով, ֆաբգործ. բջիջի բյուրո և ռայկոմ (քաղաքի), կոմյերիտականների համար բացի դրանից, նաև Համ. ԼԿՅԵՄ բջիջների բյուրո և ընդհանուր գործարանային ու ցեխային ժողով: Բանվորներին կուսակցության մեջ ընդունելու վերջնական վորոշման իրավունքը (1-ին կատեգորիայով ընդունվողների նկատմամբ) տարածել գործարանային բոլոր շրջկոմների վրա:

ԿԿ-ը նմանապես անհրաժեշտ համարեց, վոր ՌՍՖՍՀ ժողկոմխորհը և ազգային կոմկուսակցությունների ԿԿ-ները միջոցներ ձեռք առնեն արագացնելու այբբենական անգրագիտության վերացման գործն ինդուստրիալ բանվորների նկատմամբ և առաջին հերթին տեքստիլ արդյունաբերության այն շրջաններում, ուր կանանց աշխատանքը գերակշռող է. նմանապես ուժեղացնել անգրագիտության վերացման աշխատանքը բատրակների մեջ և հատկապես խորհրդային տնտեսություններում:

## 3. ԿՈՒՍԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԴՐՄԱՆ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆՈՐ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Առաջարկել կուսկոմիտեներին միջոցներ ձեռք առնել ծավալելու կուսակցական լուսավորության լրացուցիչ ցանցը՝ ուսումնական տարվա ընթացքում կուսակցության մեջ բոլոր ընդունվածներին ժամանակին ընդգրկելու կուսդաստիարակության մեջ:

ԿԿ Ագիտպրոպ-բաժինը պետք է ապահովի այս դիրեկտիվի կիրառումը: Կուսակցության ստորին ցանցի կազմակերպման ժամանակ անկուսակցական բանվոր ակտիվիստներին անհրաժեշտ է ավելի մեծ տեղ տալ, վորպեսզի նրանք բոլոր սովորողների թվում մի յերրորդից մինչև կես կազմեն:

2. Կազմբաժնին և Ագիտպրոպ-բաժնին հանձնարարել, մի ամիս ժամանակով, արդյունաբերական շրջանների պրոպ. խմբակներից առանձնացնել յերկու հոգու՝ կոմյերիտական քաղգրագիտության ուսուցման գործը լավ հիմքերի վրա դնելու, և մի ուրիշին՝ պատգամա-



վորուհիների դաստիարակչական աշխատանքը կանոնավորելու համար:

3. Հանձնարարել Պետհրատին հրատարակելու մի շարք գրքույկներ, վորոնք կնպաստեն մասսայականացնելու կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունն այնպես, վոր մատչելի լինի մասսայիկ բանվորի ու բատրակի մտավոր մակարդակին: ԿԿ Ագիտբաժնին և Պետհրատին հանձնարարել մեկ ամսվա ընթացքում զեկուցել ԿԿ-ին հրատարակությունների համապատասխան ծրագիրը:

4. Ընդունելով, վոր բանվորների կուսակցությունից դուրս գալու դեմ պայքարելու ամենակարևոր միջոցներից մեկն այն է, վոր ճիշտ կերպով կարողանանք օգտագործել նրանց գործնական աշխատանքներում ու ընդգրկենք հատկապես նրանց հետամնաց մասին կուսդաստիարակչական աշխատանքների մեջ՝ առաջարկել կուսկազմակերպություններին ձգտել, վորպեսզի վոչ մի կոմունիստ, նրանց թվում և նոր ընդունված ընկերները չմնան առանց հասարակական աշխատանքի. դրա հետ միասին վճռականապես անցնել կուսբեռնավորման կամավոր ընտրության իրագործման: Սրա հետ միասին, ավելի հետամնաց բանվորների և ընտանեկան, կենցաղային ծանր պայմանների մեջ ապրող բանվորուհիների համար կազմակերպել կուս-կրթական աշխատանքներ՝ խմբակային և անհատական պարապմունքների միջոցով:

5. ԿԿ-ում լսել Իվանովո-Վոզնեսենսկի նահանգկոմի և Սվերդլովսկի ու Ստալինսկի մարզկոմների զեկուցումներն այն մասին, թե ինչ են արել նրանք բանվորների կուսակցությունից դուրս գալու դեմ պայքարելու գործում:

## 4. ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՍՏՈՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՄՐԱՊԸՆԴԵԼՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.

1. Խոշոր ձեռնարկություններում (ուր 5000-ից ավելի բանվորներ և առնվազն 1000-ի չափ կոմունիստներ կան), ընդհանուր գործարանային բջիջների բյուրոների փոխարեն կազմակերպել գործարանային կուսակցական կոմիտեներ, սակայն այնպես, որ դրանով ձեռնարկության մեջ վճարովի աշխատող կուսաշխատավորների թիվը չավելանա:

2. Այն ձեռնարկություններում, ուր աշխատանքները 2 կամ 3 հերթի յեն՝ բջիջի կազմակերպչական և մասսայական աշխատանքներն այնպես դասավորել, վոր համապատասխանեն հերթերի աշխատանքների պայմաններին (կուժողովների հրավիրելն ըստ հերթերի, հերթական կազմակերպիչներ առանձնացնելու, խմբակներ ստեղծելու ըստ հերթերի և այլն):

Միտում դարձնել, վոր խմբակի կազմակերպիչները (ողակի կազմակերպիչ) ընտրվեն կուսխմբերի ժողովներում, վորից հետո պետք է հաստատվեն ցեխային բջիջի կողմից:

2. Մոտակա 2 ամսվա ընթացքում մոբիլիզացիայի յենթարկել առնվազն 50 հոգի գլխավորապես կենտրոնական հիմնարկների ղեկավար աշխատանքի յերկարատև փորձառություն ունեցողներից խոշորագույն ձեռնարկությունների ստորին մարմիններում և դազգյահի մոտ յերկար աշխատելու համար, հատկապես այն ձեռնարկություններում, ուր կուսկոմիտեներ են կազմվում, նմանապես և այն ձեռնարկություններում, վորոնք քաղաքներից դուրս են գտնվում (լեռնային, տեքստիլ):

3. Հանձնարարել Կազմբաշխ. բաժնին ԿԿ Ագիտ-



բաժնի հետ միասին կազմակերպել ամսական կուսկոմիտեներին ողնելու համար աշխատողների առանձին խմբերի առաքում պրոպագանդիստական, կուսակցական, կազմակերպչական և մասսայական աշխատանքների համար անմիջապես ամենախոշոր ձեռնարկություններում աշխատելու համար: Մոբիլիզացիայի յենթարկել 100—120 աշխատողներ (3—4 ամսով) այդ խմբակներում ժամանակավորապես աշխատելու համար: Կազմբաշխ. բաժինը մոբիլիզացիայի յենթարկվածների անձնական կազմի և հիմնարկների ցուցակը համապատասխան կազմակերպությունների հետ համաձայնեցնելուց հետո ներկայացնում է ԿԿ-ին ի հաստատություն:

Ի լրումն ԿԿ-ի վորոշման՝ արտադրական բջիջների քարտուղարների վերապատրաստման մասին, հանձնարարել Ագիտ. և Կազբաշխ. բաժիններին՝ միասին առաջարկություններ մշակելու, թե ինչ կերպ կարելի յե բարձրացնել ցեխային բջիջների քարտուղարների, խմբակների, կազմակերպիչների, ագիտպրոպ կազմակերպիչների և կին կազմակերպիչների քաղաքական մակարդակը և կազմակերպչական վորակավորումը: Աշխատանքի ժամանակաշրջանը մեկ ամիս:

Բացի այդ ԿԿ-ը նշել է կուսկոմիտեներին, վոր անհրաժեշտ է վճռական միջոցներ ձեռք առնել՝ լավացնելու տեղական հաշվառման և վիճակագրական աշխատանքների դրույքը, և հանձնարարեց ԿԿ Վիճ-բաժնին՝ այդ ուղղությամբ համապատասխան ձեռնարկումներ մշակել և վերացնել գոյություն ունեցող վիճակագրական հաշվետվության ծրագիրն այն պայմանով, վոր ապահովվի անհրաժեշտ վերահսկողությունը, կյանքի մեջ կիրառելու նոյեմբերյան պլենումի դիրեկտիվները՝ բանվորներին ներգրավելու, կուսակցության աճումը կանոնավորելու և այս վորոշումներն անցկացնելու մասին, առանց սակայն լայնացնելու հաշվետվության ծավալը:

# ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴՈՒՆՎՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

## Համ. Կ(բ)Կ Կենտկոմի վորոշումը 1928 թվի մարտի 13

Նպատակ ունենալով ավելի ճիշտ կերպով սահմանելու այն սոցիալական խմբերը, վորոնցից բաղկացած է և լրացվում է կուսակցությունը, Կենտկոմն առաջարկում է կուսկազմակերպություններին հաշվառման և ընդունելության ժամանակ հետագայում ղեկավարվել հետևյալ դրույթներով.—

1. Կոմունիստների և կուսակցության մեջ ընդունվողների սոցիալական դրությունը վորոշվում է հիմնական զբաղմունքով և արտադրության մեջ ունեցած դրությամբ, այսինքն՝ մինչև կուսակցության մեջ ընդունվելը կատարած վարձու կամ ինքնուրույն աշխատանքով:

Այն դեպքում, յերբ հիմնական զբաղմունքի սահմանումը դժվարանում է շնորհիվ մի քանի տարբեր պրոֆեսիաների կամ զբաղմունքի փոփոխության, հիմնականը համարվում է այն, վորը ժամանակագրական կարգով վերջինն է յեղել (բայց վոչ պատահական) կուսակցության մեջ մտնելուց առաջ:

2. Այն անձանց սոցիալական դրությունը, վորոնք մինչև կուսակցության մեջ ընդունվելն աշխատելիս են



յեղել ընտրովի պաշտոններում կամ վորպես առաջքաշվածներ, նույնպես և բարձրագույն ուսումնական հիմնարկներում սովորողների, ռազմական դպրոցների կուրսանտների, կարմիր բանակայինների և կարմիր տորմիղայինների, ինչպես շարքային, նույնպես և հրամ-կազմի սոցիալական դրությունը վորոշվում է նրանց հիմնական զբաղմունքով և դրությամբ արտադրության մեջ մինչև ընտրությունը, առաջքաշումը, բարձրագույն ուսումնական հիմնարկ կամ դպրոց, բանակ կամ նավատորմիղ մտնելը:

3. Համ.Կ(բ)Կ անդամներն ու թեկնածուները, ինչպես և կուսակցության մեջ ընդունվողները, իրենց սոցիալական դրությամբ վերագրվում են հետևյալ յերեք հիմնական խմբերի. ա) բանվորների, բ) գյուղացիների, գ) ծառայողների:

Հաշվառման մատերյալներում այն անձանց մասին, վորոնք չեն կարող վերագրվել հիշված խմբերից վորևե մեկին, նշանակվում է աշխատանքի այն տեսակը, վորով նրանք զբաղվում եյին մինչև կուսակցության մեջ մտնելը («տնայնագործ», «արհեստավոր», «տնային տնտեսուհի», «սովորող», «պրոֆեսիա չունի»):

4. «Բանվորներ»—սոցիալական խմբին վերագրվում են այն անձինք, վորոնց հիմնական զբաղմունքը մինչև կուսակցության մեջ մտնելը վարձու ֆիզիքական աշխատանքն է յեղել արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության բոլոր տեսակներում:

Այն անձինք, վորոնք վորպես մշտական վարձու բանվորներ են աշխատել արտադրության, գյուղատնտեսության և տրանսպորտի մեջ և միաժամանակ անձնական աշխատանքով մասնակցել են իրենց գյուղական տնտեսության մեջ, վերագրվում են բանվոր-



277
1506-50
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ... Публичная Биб...

ների սոցիալական խմբին, բանվորներին են վերագրվում նույնպես և այն կոմունիստները, վորոնց հիմնական զբաղմունքը կուսակցության մեջ մտնելուց հետո վարձու ֆիզիքական աշխատանքն և արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության մեջ՝ անկախ նրանից, վոր կուսակցության մեջ ընդունվելիս նրանք վերագրվել են սոցիալական այլ խմբերի:

Սեզոնային բանվորները, վորոնք միաժամանակ իրենց գյուղական տնտեսությունն են վարում, բանվորների խմբին են վերագրվում այն դեպքում միայն, յեթե սեզոնային բանվորական աշխատանքը նրանց համար գոյության միջոցների մշտական և հիմնական աղբյուրն է հանդիսանում:

Բանվորներին են վերագրվում նույնպես արտադրության կամ տրանսպորտի մեջ աշխատող ստորին սպասարկու պերսոնալը:

5. «Գյուղացիների» սոցիալական խմբին վերագրըրվում են այն անձինք, վորոնց հիմնական զբաղմունքը մինչև կուսակցության մեջ մտնելը յեղել է հողագործություն, վորսորդություն, անասնապահություն, ձկնորսություն և այլն (վոչ վարձովի աշխատանք):

6. «Ծառայողների» սոցիալական խմբին են վերագրվում այն անձինք, վորոնց հիմնական զբաղմունքը մինչև կուսակցության մեջ ընդունվելը յեղել է ղեկավար, տնտեսական, տեխնիքական, հաշվառ-վերահսկիչ, գործավարական, բժշկա-սանիտարական, իրավաբանական, մանկավարժական և այլ պերսոնալի աշխատանքը, ինչպես նաև հիմնարկությունների ստորին սպասարկող պերսոնալը:

7. Կուսակցության մեջ ընդունվողների սոցիալա-



կան դրությունը վորոշում է բջիջը և հաստատվում է կուսկոմիտեյի կողմից:

## Համ.Կ(բ.)Կ Կենտկոմի վորոշումը 1928 թվի մայիսի 7-ին

Այն կոմունիստների և կուսակցության մեջ ընդունվողների սոցիալական դրությունը, վորոնք գտնվում են ռազմականացված պահակում կամ Միացյալ Պետքաղվարչության զորքերի շարքերում վորոշվում է նրանց զբաղմունքով և դրությամբ արտադրության մեջ՝ մինչև նրանց մտնելը ռազմականացված պահակ կամ Միացյալ Պետքաղվարչության զորքերի մեջ այսինքն՝ սոցիալական դրության վորոշման տեսակետից նրանք հավասարեցվում են կարմիր բանակայիններին (տես Կենտկոմի 1928 թ. մարտի 13-ի վորոշման 2-րդ կետը):

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Անվան
Публичная Библиот...

ՀՀ Ազգային գրադարան
NL0186687